ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆՁԻ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Հավակնությունները և կարգավիճակը անձի ձևավորման գործընթացի գործոններից են: Դրանք հատկապես կարևորվում են դեռահասության շրջանում՝ որպես հոգեֆիզիոլոգիական վերակառուցումների, ինքնահաստատման և ինքնաարտահայտման ձևերի և միջոցների ակտիվ որոնումների փուլ: Փորձել ենք մեր հետազոտության միջոցով բացահայտել հավակնությունների և կարգավիճակի անձնային և վարքագծային դրսևորումները դեռահասների խմբերում, ինչպես նաև դրանց կառավարման հոգեբանական մեխանիզմները: Այդ նպատակով ուսումնասիրել ենք միջանձնային հարաբերությունները օժտված և միջին ընդունակություններով դեռահասների խմբերում, որտեղ հավակնությունների և սոցիոմետրիկ կարգավիճակի տարբերությունները ավելի ակնհայտ են դրսևորվում:

Մեր կատարած ուսումնասիրությունների տվյալները վկայում են, որ արտաքին միջամտության, կառավարման կարիք ունեն հավասարապես և՛ բարձր հավակնություններն ու ցածր կարգավիճակը, և՛ ցածր հավակնություններն ու բարձր կարգավիճակը: Դրանց կառավարման հիմքում ընկած են մի շարք օրինաչափություններ, որոնք իրենց դրական և բացասական դրսևորումներն են գտնում միջանձնային հարաբերություններում: Այդ հարաբերությունները շարժուն են, քարացած չեն, ունեն զարգացման որոշակի շարժընթաց, որը պայմանավորված է ամենատարբեր գործոններով: Ժամանակ առ ժամանակ, երբ մեծանում կամ փոքրանում է որևէ գործոնի տեսակարար կշիռը, միջանձնային հարաբերությունների բնույթը փոխվում է, համապատասխանաբար փոփոխություններ են կրում նաև անձի սոցիոմետրիկ կարգավիճակը և հավակնությունների մակարդակը: Մեր կարծիքով, այս մեխանիզմը գործում է հակադարձ կապի սկզբունքով, քանի որ հավակնությունների և կարգավիճակի փոփոխությունները իրենց հերթին առաջ են բերում միջանձնային հարաբերությունների շարժընթացի բնույթի փոփոխություն: Մեր կողմից առանձնացվել և հետազոտվել են այդ մեխանիզմը կարգավորող հետևյալ գործոնները:

Դիտարկենք հոգեբանական գործոնի՝ անձնային որակների ազդեցությունը այս մեխանիզմի վրա: Այնպիսի անձնային դրական որակները, ինչպիսիք են մարդամոտությունը, աշխուժությունը, ինտելեկտը, սոցիալական նորանոր

կապերի մեջ մտնելու ընդունակությունը, կազմակերպչական ընդունակությունը, համեստությունը նպաստում են բարձր կարգավիճակ ձեռք բերելուն: Իսկ այնպիսի որակները, ինչպիսիք են իշխանատենչությունը, եսասիրությունը, ստախոսությունը, կռվարարությունը, նախանձկոտությունը, ճիշտը հակառակն է՝ իջեցնում են կարգավիճակը և ավելին՝ հոգեբանական հիմք են դառնում ֆրուստրացիայի, աֆֆեկտիվ վիճակներին և առուտիզմի համար: Իհարկե նշված հատկություններից որևէ մեկը առանձին չի կարող դետերմինավորել բարձր կամ ցածր կարգավիճակը: Յուրաքանչյուր խմբի չափանիշներին համապատասխանում է դրական կամ բացասական որակների այս կամ այն խումբը՝ կախված նաև խմբի սոցիալական սպասումներից: Հավակնությունները, կարգավիճակը կփոփոխվեն ոչ թե մեկ առանձին հատկության փոփոխության հետևանքով, այլ երբ հատկությունների այդ խմբերում կատարվեն էական փոփոխություններ: Բացի այդ, բացասական որակների առկայությունը դեռևս չի նշանակում դրական որակների լրիվ բացակայություն և հակառակը:

Օբյեկտիվ գնահատելով անձի հոգեկան առանձնահատկությունները, բնավորության գծերը, տիպաբանական առանձնահատկությունները և հենվելով միջանձնային հարաբերությունների հարաշարժուն բնույթի վրա, հավակնությունների մակարդակը կարելի է իջեցնել կամ բարձրացնել: Համապատասխանաբար, կփոխվեն նաև կարգավիճակը և վարքը: Այս ճկուն մեխանիզմը հնարավորություն է տալիս շտկելով որոշ բացասական որակներ, իջեցնել հավակնությունների մակարդակը, համապատասխանեցնել այն անձի օբյեկտիվ հնարավորություններին, կարգավորել ներխմբային հարաբերությունները և վարքը:

Անձի բոլոր տեսակի ապրումները՝ դրական, թե աֆֆեկտիվ, տրամադրությունները, իրենց արտահայտությունն են գտնում ոչ միայն վարքում, այլև իմացական գործունեության մեջ: Հետևաբար, ուսման առաջադիմությունը, փոխհարաբերությունների և վարքի հետ մեկտեղ հանդիսանում է հավակնությունների ու կարգավիճակի կառավարման և՛ միջոց, և՛ չափանիշ: Իսկ դրանց դրական դրսևորումները՝ որպես երեխայի անձի կառավարելիության ցուցանիշ: Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուսման առաջադիմությունը և վարքը հակադարձ համեմատական են հավակնություններին՝ որքան հավակնությունները բարձր են, ուսման առաջադիմությունը ցածր է, վարքը աֆֆեկտիվ:

Որքան կարգավիճակը ցածր է, այնքան ցածր է նաև ուսման առաջադիմությունը: Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ երեխայի անձի հավակնությունների և կարգավիճակի կառավարման հոգեբանական մեխանիզմը կապված է առաջին հերթին հոգեբանական գործոնի՝ անձի հոգեկան

որակների հետ, որոնց կրած փոփոխությունները անմիջապես պրոեկտվում են հավակնություններում և կարգավիճակում, առաջ բերում վարքի այս կամ այն ձևը, ազդում նաև ուսման առաջադիմության վրա:

Հավակնությունները և կարգավիճակը կարգավորող մյուս գործոնը սոցիալ-հոգեբանական գործոնն է: Մենք արդեն խոսել ենք օժտվածների խմբում ձևավորված բարձր սոցիալ-հոգեբանական չափանիշների մասին, որոնց բավարարելը շատ դժվար է, և որոնք նպաստում են հավակնությունների բարձրացմանը: Ձգտելով արժանանալ դասընկերների բարձր գնահատականին և հարգանքին, դեռահասը անում է ամեն ինչ, որպեսզի բավարարի գործող չափանիշները՝ ունենալով սոցիալական մեծ սպասումներ և բարձրացնելով հավակնությունները: Հաշվի առնելով խմբի սոցիալական չափանիշների դերը նկարագրված մեխանիզմում, ենթադրում ենք, որ խմբի սոցիալ-հոգեբանական կառուցվածքի, նրա չափանիշների փոփոխությունը բերում է հավակնությունների և կարգավիճակի փոփոխության՝ համապատասխան հետևանքներով: Այսինքն հավակնությունները և կարգավիճակը կառավարվում են նաև ներխմբային կառուցվածքով և չափանիշներով: Ըստ մեր հետազոտության տվյալների, որքան բարձր են դեռահասների խմբերում գործող սոցիալ-հոգեբանական չափանիշները, այնքան բարձր է նրա անդամների հավակնությունները, շատ են ցածր կարգավիճակով անձինք:

Այդպիսի պատկեր ստացվեց, երբ համեմատեցինք օժտված դեռահասների և սովորական ընդունակություններով դեռահասների խմբերում հավակնությունները և սոցիոմետրիկ կարգավիճակը: Նկարագրված օրինաչափությունն ընկած է հավակնությունների և կարգավիճակի կառավարման հոգեբանական մեխանիզմների հիմքում:

Մեզ մնում է բացահայտել մեկ օրինաչափություն ևս, որը նախորդ երկուսի նման կպարզաբանի այն հոգեբանական մեխանիզմները, որոնցով կառավարվում են հավակնությունները և կարգավիճակը: Հետազոտության ընթացքում մենք բախվեցինք փաստերի հետ, երբ ոչ ճիշտ ընտանեկան դաստիարակությունը, կամ մանկավարժական ոչ ճիշտ մոտեցումը դառնում է շատ բացասական երևույթների պատճառ: Հետազոտվածների մեծամասնության մոտ ընտանիքում օժտված երեխային բարձր են դասում մյուսներից, տալիս որոշակի իրավունքներ և արտոնություններ, բարձրածայն արտահայտվում նրա ամեն մի արժանիքի մասին, միշտ հավանություն տալիս նրա բոլոր արարքներին: Նման մոտեցում նկատվում է նաև որոշ մանկավարժների մոտ, որոնք միշտ հարցում են անում միևնույն աշակերտներին, շեշտում նրանց առավելությունները, գովաբանում նրանց՝ անտեսելով համեմատաբար պասիվ

աշակերտներին: Այս ամենը աղավաղում է դեռահասի ինքնընկալումը, նպաստում, եթե ոչ պատճառ դառնում վատ որակների ձևավորմանը և ամրանդրմանը, խաթարում «ես» հիմնադրույթը, անհամապատասխան ձևով բարձրացնում հավակնությունները: Հետևաբար՝ աշակերտի վարքը, նման հոգեբանական նախադրյալներ ունենալով, դառնում է շեղված, աֆֆեկտիվ: Նշված հոգեբանա-մանկավարժական հարցերի ճիշտ լուծումը ևս կարգավորում է հավակնությունները, կարգավիճակը, վարքը: Որպես ասվածի ապացույց ունենք հետազոտության փաստացի տվյալներ. այն ընտանիքի երեխաները, որտեղ կրթվածության և բարեկեցության մակարդակը բարձր է, ունեն համեմատաբար համարժեք հավակնություններ, կարգավիճակ և վարք:

Այսպիսով, կարող ենք ասել, որ դեռահասի հավակնությունների մակարդակի և սոցիոմետրիկ կարգավիճակի կառավարման հոգեբանական մեխանիզմները բացատրվում են մեր կողմից բացահայտած երեք օրինաչափություններով: Միաժամանակ հավատացած ենք, որ առաջիկայում հնարավոր կլինի բացահայտել այդ մեխանիզմների նորանոր օրինաչափություններ: Իսկ առայժմ, մեր առջև դրված հիմնախնդիրը քննարկելով երեք ասպեկտներով՝ հոգեբանական, սոցիալ-հոգեբանական, հոգեբանա-մանկավարժական, բացահայտել ենք օժտված երեխաների խմբում միջանձնային հարաբերությունների, վարքի, այսինքն՝ հավակնությունների մակարդակի և սոցիոմետրիկ կարգավիճակի կառավարման հոգեբանական մեխանիզմները: Հետազոտության ընթացքը և արդյունքների հոգեբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ շարունակական մանկավարժական միջամտության և նպատակասլաց կառավարման կարիք ունեն այն երեխաները և դեռահասները, որոնք հավասարապես ունեն բարձր հավակնություններ և ցածր սոցիոմետրիկ կարգավիճակ և հակառակը: Նրանց կառավարման հիմքում ընկած են հոգեբանական օրինաչափություններ, որոնք առավելապես իրենց դրսևորումներն են գտնում խմբի անդամների բարենպաստ և անբարենպաստ փոխհարաբերություններում: Վերջիններիս ճիշտ կառավարման կարևորագույն հոգեբանական գործոնը անձնային գործոնի համարժեք գիտակցումն է և որպես գործունեության սկզբունք ընդունելը: Հետևաբար, ելնելով հետազոտության արդյունքներից, կարող ենք եզրակացնել, որ բազմակողմանի ճանաչելով և համարժեքորեն գնահատելով դեռահասներին /ինչպես նաև օժտվածներին/, հեռվելով միջանձնային հարաբերությունների հարաշարժուն բնույթի վրա, կարելի է իջեցնել կամ բարձրացնել նրանց հավակնությունների մակարդակն ու դրան համարժեք և կարգավիճակը, որոշակիորեն կարգավորել և կառավարել նրանց վարքը:

Մեր հետազոտության շրջանակում պարզաբանված հոգեբանական օրինաչափությունները հաստատում են, որ դեռահասների հավակնությունները և սոցիոմետրիկ կարգավիճակը ոչ միայն կառավարելի են, այլ կարող են ունենալ նաև ինչպես դրական, այնպես էլ բացասական դրսևորումներ: Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպումը և կառավարումը պահանջում են հոգեբանական և սոցիալ-հոգեբանական օրինաչափությունների իմացություն, անձնային գործոնի հաշվառում, ոչ համարժեք հավակնությունների և կարգավիճակի ախտորոշում, յուրատիպ հոգեբանական մոտեցում, աշակերտների փոխհարաբերությունների կազմակերպում և կառավարում:

Գրականություն

1. Л. Л. Колонинский - Осознание человеком своих взаимоотношений с другими членами группы. /Вопросы психологии-1967 N3/.
2. И. С. Кон - В поисках себя. Личность и самосознание. М. 1984.
3. А. А. Леонтьев — Психология общения, М. 1974.